Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. հուլիսի 30-ի թիվ 115-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածական մաս ----------էջ 3
2.Ամփոփագիր ----------էջ 6
3.Տվյալներ հաշվեքննվող օբյեկտի ֆինանսական հաշվետվության վերաբերյալ--էջ 9
4.Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ ----------էջ 19
5.Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ----------էջ 21
6.Եզրակացություններ, առաջարկություններ ----------էջ 22

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 89-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

Հաշվեքննության առարկան

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2020 թվականի երեք ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության չափանիշները

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում:
2. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. մարտի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու և գույք ամրացնելու մասին» թիվ 387-Ն որոշում:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. մարտի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գույք ամրացնելու մասին» թիվ 393-Ն որոշում:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Գնման գործընթացները սահմանելու մասին» թիվ 296-Ա որոշում:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և հայաստանի հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» թիվ 43-Ն որոշում:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» թիվ 161-Ն որոշում:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշում:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի ապրիլի 2-ի N 219 որոշումը մասնակիորեն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 194-Ն որոշում:

10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 304-Ն որոշում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020թ. մարտի 31-ը՝ ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020 թվականի հունիսի 8-ից մինչև 2020թ. հուլիսի 31-ը՝ ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի, ՀՀ հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով ՀՀ վարչապետի աշխատակազմը կատարող է հանդիսացել 15 ծրագրի շրջանակում իրականացվող 58 միջոցառման համար, որի կատարման նպատակով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 29,767,933.1 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի հաշվետու ժամանակահատվածի (առաջին եռամսյակ) պլանը կազմել է 5,413,749.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 7,350,978.9 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 3,501,143.3 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 3,628,380.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 3,813,611.0 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 49 . 4%-ով:

ՀՀ վարչապետի աշխատակազմի 2020 թվականի բյուջեով առաջին եռամսյակում պլանավորվել է իրականացնել 44 միջոցառում, որից չի իրականացվել 13 միջոցառում, դրանք են՝ «1033-11002 Պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում», «1033-12003 Աջակցություն «ՀՀ վետերանների միավորում» հասարակական կազմակերպությանը պահպանման ծախսերի կատարման և Հայրենական Մեծ հաղթանակի 75-ամյակի կապակցությամբ», «1156-11007 Քայլ դեպի տուն», «1156-11008 Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստում», «1156-11009 Հանրային ոլորտում սփյուռքահայ երիտասարդ մասնագետների պրակտիկայի կազմակերպում», «1156-11010 Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ իրազեկման ապահովում», «1156-12001 Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին», «1213-11005 Արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ», «1213-11008 Ներմուծվող սննդամթերքի և կենդանական ծագման մթերքի անվտանգության ապահովում», «1214-11002 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագիր», «1222-11001 Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունների իրականացում և ներուժի բացահայտում», «1222-11002 Սփյուռքի ներուժի վերաբերյալ տվյալների համակարգերի ներդնում և գործածում», «1223-11001 Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ»: Չիրականացված միջոցառումների համար հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է 820,699.3 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմում հաշվեքննությունն իրականացվել է ութ միջոցառման շրջանակում, որոնց հաշվետու ժամանակահատվածի պլանը կազմել է 1,637,183.4 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 2,953,938.7 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,242,214.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,257,925.9

հազ. դրամ: Ճշտված պլանով 1,316,755.3 հազ. դրամ գումարի ավելացումը հիմնականում պայմանավորված է չորս միջոցառման ավելացմամբ, որոնց գումարներ հատկացվել են ՀՀ պահուստային ֆոնդից կառավարության համապատասխան որոշումների հիման վրա: Այդ միջոցառումներն են՝ «1003-11007 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում», «1003-31001Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման», վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում», «1033-11003 Աջակցություն հասարակական կազմակերպություններին» և «1223-12001 Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»:

Հաշվեքննությամբ ընդգրկված ութ միջոցառման առաջին եռամսյակի բյուջեի կատարողականը կազմել է 75.9%: Ցածր կատարողական է արձանագրվել «1018 Պետական հատվածի արդիականացում» ծրագրի «32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսված գումարների ծախսման հետ կապված՝ այն կազմել է 38.5%:

Համաձայն ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության, ՀՀ վարչապետի աշխատակազմի առաջին եռամսյակի բյուջեում ծրագրված ցուցանիշներից շեղումը հիմնականում հետևանք է COVID-19 համավարակի և Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության:

Հաշվեքննության արդյունքում բացահայտվել են անհամապատասխանություններ, որոնք վերաբերում են հետևյալ երկու միջոցառմանը՝

«1033 Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրի «11003 Աջակցություն հասարակական կազմակերպություններին» միջոցառման իրականացման շրջանակում ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից չեն ներկայացվել 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի 13-րդ կետի հիման վրա հաստատված նիստերի արձանագրությունները և կարգի 29-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը և որոշումը:

Չի ապահովվել «1091 Հանրային իրազեկում» ծրագրի «11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման շրջանակում կնքված պայմանագրի 3.2 կետի պահանջը՝ հարկային հաշիվները դուրս են գրվել պայմանագրով սահմանված ժամկետից ուշացումներով:

Մնացած վեց նշանակալի հաշիվների հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՇՎԵՔՆՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ վարչապետի աշխատակազմում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության իրականացման նպատակով ընտրվել են ութ նշանակալի հաշիվներ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ)՝ հիմք ընդունելով ՀՀ հաշեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշումը և հաշվի առնելով առաջին եռամսյակի հաշվեքննության 2,190,789.0 հազ. դրամի չափով նվազագույն ծածկույթը:

Հաշվեքննությամբ ընդգրկված ութ նշանակալի հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հազ. դրամ

Ծրագիր, միջոցառում, հոդված				Հաշվետու ժամանակա-հատվածի պլան	Հաշվետու ժամանակա-հատվածի ճշտված պլան	Փաստ (դրամարկղային ծախս)	Փաստացի ծախս
				1,637,183.40	2,953,938.70	2,242,214.60	2,257,925.90
1003	Հանրային առողջության պահպանում			-	990,137.50	990,137.46	990,137.46
	1003-11007	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում		-	371,509.20	371,509.20	371,509.20
			4266 Առողջապահական և լաբորատոր նյութեր	-	371,509.20	371,509.20	371,509.20
	1003-31001	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում		-	618,628.30	618,628.26	618,628.26
			5122 Վարչական սարքավորումներ	-	618,628.30	618,628.26	618,628.26
1018	Պետական հատվածի արդիականացման ծրագիր			938,853.80	938,853.80	361,296.79	361,296.79
	1018-32001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ		938,853.80	938,853.80	361,296.79	361,296.79

		ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում					
		5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	938,853.80	938,853.80	361,296.79	361,296.79
1033	Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին			-	177,851.20	158,524.40	17,851.20
	1033-11003	Աջակցություն հասարակական կազմակերպություններին		-	177,851.20	158,524.40	17,851.20
		4639	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	-	177,851.20	158,524.40	17,851.20
1091	Հանրային իրազեկում			144,016.70	150,943.10	144,016.70	151,926.91
	1091-11001	Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ		144,016.70	150,943.10	144,016.70	151,926.91
		4637	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	144,016.70	150,943.10	144,016.70	151,926.91
1136	ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում			554,312.90	554,312.90	458,599.85	607,074.14
	1136-11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում		440,919.50	440,919.50	345,206.45	494,000.54
		4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	440,919.50	440,919.50	345,206.45	494,000.54
	1136-11010	ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործում և սպասարկում		113,393.40	113,393.40	113,393.40	113,073.60
		4637	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	113,393.40	113,393.40	113,393.40	113,073.60

1223	Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում			-	141,840.20	129,639.40	129,639.40
	1223-12001	Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա արդարացի ֆինանսական հատուցումների տրամադրում		-	141,840.20	129,639.40	129,639.40
		4851	Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում		141,840.20	129,639.40	129,639.40

ԾՐԱԳԻՐ՝ 1003 Հանրային առողջության պահպանում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11007 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 31001 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով «11007 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» միջոցառման «4266 Առողջապահական և լաբորատոր նյութեր» հոդվածով առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսվել է 371,509.2 հազ. դրամի ծախս, ֆինանսավորվել է 371,509.2 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է՝ 371,509.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 371,509.2 հազ. դրամ:

«31001 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառման «5122 Վարչական սարքավորումներ» հոդվածով առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսվել է 618,628.3 հազ. դրամի ծախս, ֆինանսավորվել է 618,628.3 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է՝ 618,628.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 618,628.3 հազ. դրամ:

Վերոնշյալ միջոցառումների իրականացման համար գումարը հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ ՀՀ կառավարության հետևյալ որոշումների հիման վրա.

Համաձայն ՀՀ կառավարության 28.03.2020թ. N 387-Ն որոշման՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ վարչապետի աշխատակազմի 1003 Հանրային առողջության պահպանում ծրագրի 11007 միջոցառմանը առաջին եռամսյակի համար հատկացվել է 185,754.6 հազ. դրամ՝ 30000 հատ ախտորոշման բժշկական հավաքածու, 31001 միջոցառմանը՝ 618,628.3 հազ. դրամ՝ 100 հատ բժշկական շնչառական սարք ձեռք բերելու համար:

Համաձայն ՀՀ կառավարության 30.03.2020թ. N 393-Ն որոշման՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի 1003 Հանրային առողջության պահպանում ծրագրի 11007 միջոցառմանն առաջին եռամսյակի համար հատկացվել է 185,754.6 հազ. դրամ՝ ևս 30000 հատ ախտորոշման բժշկական հավաքածու ձեռք բերելու համար:

ՀՀ կառավարության 28.03.2020 թվականի N387-Ն և 30.03.2020 թվականի N393-Ն որոշումների 3-րդ կետով սահմանվել է, որ գնումներն իրականացվում, իսկ վճարումները կատարվում են հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N296-Ա որոշմամբ նախատեսված կարգով:

ՀՀ վարչապետի աշխատակազմը վճարումներն իրականացրել է HUNAN MACHINERY & EQUIPMENT IMP. & EXP. CORP. չինական կազմակերպության 27.03.2020 թվականի 1,597,900 ԱՄՆ դոլար (100 հատ բժշկական շնչառական սարքի և 30000 հատ ախտորոշման բժշկական հավաքածուի համար) և 28.03.2020 թվականի 369,000 ԱՄՆ դոլար (30000 հատ ախտորոշման բժշկական հավաքածուի համար)՝ գումարներով հաշիվ-ապրանքագրերի (proforma invoice) հիման վրա:

Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N296-Ա որոշման 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների շրջանակում գործարքները կարող են կատարվել առանց գրավոր պայմանագրերի կնքման՝ վճարումները կատարելով նաև հաշիվ-ապրանքագրի կամ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի հիման վրա, ինչպես նաև բացառիկ դեպքերում՝ առանց վերջիններիս առկայության:

ԾՐԱԳԻՐ՝ 1018 Պետական հատվածի արդիականացում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում

«1018 Պետական հատվածի արդիականացում» ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 18.11.2015 թվականին կնքվել է թիվ 8539-AM համաձայնագիրը՝ 21 000 000 ԱՄՆ դոլար վարկ տրամադրելու վերաբերյալ: Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը:

«1018 Պետական հատվածի արդիականացում» ծրագրի «32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման առաջին եռամսյակի ճշտված պլանով «5129 Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսվել է 938,853.8 հազ. դրամի ծախս, ֆինանսավորվել է 68,000.0 հազ. դրամ (31.12.2019թ. դրությամբ ծրագրի հատուկ հաշվի մնացորդը կազմել է 1,499,836.6 ԱՄՆ դոլար), փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է՝ 361,296.8 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 361,296.8 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է նախատեսված միջոցների 38.5%-ը, ինչը համաձայն ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ պայմանավորված է COVID-19 համավարակի և Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության հետևանքով արտերկրից ներմուծվող ապրանքների մատակարարումների ուշացումներով:

Հաշվետու ժամանակահատվածում վճարումներ են կատարվել 2019 թվականին կնքված երեք պայմանագրի և 2020 թվականին կնքված մեկ պայմանագրի շրջանակներում: Պայմանագրերի կնքման հետ կապված գնումների գործընթացներն իրականացվել են 2019 թվականին:

ԾՐԱԳԻՐ՝ 1033 Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11003 Աջակցություն հասարակական կազմակերպություններին

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով ՀՀ վարչապետի աշխատակազմի «11003 Աջակցություն հասարակական կազմակերպություններին» ծրագրով առաջին եռամսյակի «4639 Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով ճշտված պլանը կազմել է 177,851.2 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 158,524.4 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 158,524.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 17,851.2 հազ. դրամ:

Վերոնշյալ միջոցառման իրականացման համար գումարը հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության հետևյալ որոշումների հիման վրա՝

ՀՀ կառավարության 23.01.2020թ. թիվ 43-Ն որոշմամբ հատկացվել է 17,851.2 հազ. դրամ՝ քաղաքացիական հասարակության կառույցների և նրանց կարողությունների զարգացմանը, տնտեսական և քաղաքական կյանքում ՔՀԿ-ների ընդգրկվածության և մասնակցության աճին խթանելու նպատակով (որոշման 2-րդ և 3-րդ կետերը հույժ գաղտնի են):

ՀՀ կառավարության 13.02.2020թ. N161-Ն որոշմամբ հատկացվել է 160,000.0 հազ. դրամ՝ Արցախում 2020 թվականի մարտին նախագահական և խորհրդարանական ընտրություններին քաղաքացիական հասարակության կողմից դիտորդական առաքելության իրականացման համար դրամաշնորհային մրցույթի միջոցով հաղթած երկու հասարակական կազմակերպություններին տրամադրելու նպատակով:

ՀՀ կառավարության 13.02.2020թ. N161-Ն որոշման հիման վրա պայմանագրեր են կնքվել երկու հասարակական կազմակերպության հետ:

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» խորհրդատվական հասարակական կազմակերպության հետ պայմանագիրը կնքվել է 28.02.2020 թվականին 80,000.0 հազ. դրամ գումարով:

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության հետ պայմանագիրը կնքվել է 28.02.2020 թվականին 60,673.2 հազ. դրամ գումարով:

11003 միջոցառման դրամարկղային ծախսը (փաստ) կազմել է 158,524.4 հազ. դրամ (89.1 % կատարողական):

ԾՐԱԳԻՐ՝ 1091 Հանրային իրազեկում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով ՀՀ վարչապետի աշխատակազմի «11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման առաջին եռամսյակի պլանը «4637 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով կազմել է 144,016.7 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 150,943.1 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 144,016.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը 144,016.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 151,926.9 հազ. դրամ:

Տվյալ միջոցառման իրականացման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ 08.01.2020թ-ին կնքվել է Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական

աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 01 պայմանագիրն՝ ըստ որի ՊՈԱԿ-ը պետք է իրականացնի ՀՀ կառավարության գործունեության լուսաբանում, թեմատիկ վերլուծություններ և ԶԼՄ-ների ամենօրյա մշտադիտարկում: Սույն պայմանագրով ՀՀ վարչապետի աշխատակազմը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով ՊՈԱԿ-ին հատկացնել ՀՀ կառավարության թիվ 1919-Ն որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով մինչև 733,555.6 հազ. դրամ:

Վերոնշյալ միջոցառման դրամարկղային ծախսը (փաստ) կազմել է 144,016.7 հազ. դրամ (95.4 % կատարողական): Ըստ արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության թիվ 274-Ն որոշումն ընդունվել է հաշվետու ժամանակահատվածի վերջում և վերապահված գործառույթները կիրականացվեն 2-րդ եռամսյակից:

ԾՐԱԳԻՐ՝ 1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11001 Ծառայությունների, ծրագրերի համակարգում

ՀՈԴՎԱԾ՝ 4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով «11001 Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսվել է 440,919.5 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 440,919.5 հազ. դրամ, ֆինանսավորվել է 440,919.5 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է՝ 345,206.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 494,000.5 հազ. դրամ:

«4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածի հաշվեքննության նպատակով իրականացվել է վիճակագրական ընտրանք: 345,206.4 հազ. դրամ եռամսյակի դրամարկղային ծախսը ընդունելով որպես բազմության գումար, 81,638.6 հազ. դրամը էականության հատուկ շեմ՝ ընտրանքի միջակայքը կազմել է 47,271.0 հազ. դրամ: Հաշվեքննության է ենթարկվել 10 աշխատակցի բազային դրույքի, ստաժի գործակցի համապատասխանությունը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքին ու սկզբնական հաշվառման փաստաթղթերին:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 15.01.2020թ. «Տրանսպորտային ծախսերի փոխհատուցում հատկացնելու մասին» թիվ 21-Ա հրամանով Վարչապետի աշխատակազմի պաշտոնատար անձանց 2020թ. հունվարից մինչև դեկտեմբերը ներառյալ յուրաքանչյուր ամիս հատկացվելու է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում 60.0 հազ. դրամ (գումարի մեջ չեն ներառվում վճարվող հարկերը և նպատակային սոցիալական վճարները):

4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և շեղումներ չեն հայտնաբերվել:

ԾՐԱԳԻՐ՝ 1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11010 ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործում և սպասարկում

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով «11010 ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործման և սպասարկում» միջոցառման առաջին եռամսյակի ճշտված պլանը «4637 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով կազմել է 113,393.4 հազ. դրամ, ֆինանսավորվել է 113,393.4 հազ. դրամ, փաստը կազմել է 113,393.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 113,073.6 հազ. դրամ:

11010 միջոցառման իրականացման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Կոնդի առանձնատների» ՊՈԱԿ-ի հետ 31.01.2020թ-ին կնքվել է Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 01 պայմանագիրը: Սույն պայմանագրով ՀՀ վարչապետի աշխատակազմը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով ՊՈԱԿ-ին հատկացնել ՀՀ կառավարության թիվ 1919-Ն որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով մինչև 453,573.7 հազ. դրամ:

Պայմանագրի 1.2. կետի համաձայն Կազմակերպության կողմից կատարման ենթակա միջոցառումներն են՝

- ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների սպասարկումը և շահագործում:
- Կոնդի առանձնատների տնտեսության տարածքի և օժանդակ կառույցների՝ իրեն ամրացված 18250.1 քմ ընդհանուր մակերեսով շենքերի, շինությունների, 25.31319 հեկտար հողատարածքի, 290.8 քմ քոթեջի և 0.0208 հեկտար հողատարածքի ընթացիկ պահպանում, սպասարում և շահագործում, ինչպես նաև «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ի գործունեության կազմակերպում, նրա պահպանում, խնամքի, բարեկարգման և բարելավման աշխատանքների և կանոնադրական այլ նպատակների իրականացում:

Պայմանագրի 2.4.3 կետի համաձայն՝ ՊՈԱԿ-ը 13.04.2020թ-ին Աշխատակազմին է ներկայացրել Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի առաջին եռամսյակի հաշվետվություն:

Պայմանագրի 3.2 կետի համաձայն ՊՈԱԿ-ը եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը Աշխատակազմի հաստատմանը պետք է ներկայացնի եռամսյակի ընթացքում Միջոցառումների կատարման վերաբերյալ հանձնման-

ընդունման արձանագրություն: ՊՈԱԿ-ը ներկայացրել է երեք հանձնման-ընդունման ակտ՝ 18.02.2020թ-ին 37,797.8 հազ. դրամ գումարով, 16.03.2020թ-ին 37,478.0 հազ. դրամ գումարով, 13.04.2020թ-ին 37,797.8 հազ. դրամ գումարով և նույն գումարներով հարկային հաշիվներ:

ԾՐԱԳԻՐ՝ 1223 Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 12001 Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա արդարացի ֆինանսական հատուցումների տրամադրում

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով ՀՀ վարչապետի աշխատակազմի «12001 Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա արդարացի ֆինանսական հատուցումների տրամադրում» միջոցառման առաջին եռամսյակի ճշտված պլանը 4851 «Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում» հոդվածով կազմել է 141,840.2 հազ. դրամ (տարեկան պլանով ծրագիրը նախատեսված չի եղել), ֆինանսավորվել է 131,890.0 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է՝ 129,639.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 129,639.4 հազ. դրամ:

Վերոնշյալ միջոցառման իրականացման համար գումարը հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության հետևյալ որոշումների հիման վրա.

ՀՀ կառավարության 20.02.2020թ. թիվ 194-Ն որոշամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Աղանյանը և այլք ընդդեմ Հայաստանի» գործով (թիվ 58070/12 և 21 այլ գանգատ) 2019 թվականի դեկտեմբերի 5-ի վճռի պահանջները կատարելու նպատակով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում» հոդվածով) 2020 թվականի առաջին եռամսյակում հատկացվել է 242,000 եվրոյին համարժեք դրամ՝ Հայաստանի Հանրապետության 22 դիմումատուներին (յուրաքանչյուրին 11,000 եվրոյին համարժեք դրամ) վճռով սահմանված արդարացի հատուցման համար:

ՀՀ կառավարության 12.03.2020թ. թիվ 304-Ն որոշամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով (թիվ 74438/14 գանգատ) 2019 թվականի հոկտեմբերի 3-ի վճռի պահանջները կատարելու նպատակով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ

կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում» հոդվածով) 2020 թվականի առաջին եռամսյակում հատկացվել է 7,800 եվրոյին համարժեք դրամ՝ վճռով սահմանված արդարացի հատուցման համար:

ՀՀ կառավարության 12.03.2020թ. թիվ 305-Ն որոշամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Թոսունյանն ընդդեմ Հայաստանի» գործով (N 36588/13 գանգատ) 2020 թվականի հունվարի 16-ի որոշման պահանջները կատարելու նպատակով, որոշմամբ սահմանված արդարացի հատուցման համար, 2020 թվականի առաջին եռամսյակում հատկացվել է 10,000 եվրոյին համարժեք դրամ՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում» հոդվածով):

Համաձայն ՀՀ 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ 26 շահառուներից վճարվել է 22 շահառուի, քանի որ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացվել են միայն «Աղանյանը և 21 այլ ընդդեմ Հայաստանի»-ի փոխանցումն իրականացնելու համար, «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» և «Թոսունյանն ընդդեմ Հայաստանի» փաստաթղթերը ներկայացվել են և փոխանցումներն իրականացվել են ապրիլի առաջին կեսին:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

«1033 Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրի «11003 Աջակցություն հասարակական կազմակերպություններին» միջոցառման իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի թիվ 161-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին հատկացվել է 160,000.0 հազ. դրամ՝ Արցախում 2020 թվականի մարտին նախագահական և խորհրդարանական ընտրություններին քաղաքացիական հասարակության կողմից դիտորդական առաքելության իրականացման համար դրամաշնորհային մրցույթի միջոցով հաղթած երկու հասարակական կազմակերպություններին տրամադրելու նպատակով:

Համաձայն ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի 9-րդ կետի՝ կազմակերպությունը, որին հատկացվում է դրամաշնորհ, որոշվում է Կարգի համաձայն կազմակերպվող և անցկացվող մրցույթի արդյունքներով:

Կարգի 10-րդ կետի համաձայն ՀՀ վարչապետի 12.02.2020թ-ի թիվ 192-Ա որոշմամբ հաստատվել է մրցութային հանձնաժողովի անհատական կազմը:

Վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացվել են 13.02.2020թ-ի մրցույթի հանձնաժողովի որոշումը՝ մրցույթի մասին հայտարարության տեքստի և մրցույթի հրավերի տեքստի հաստատման վերաբերյալ և 26.02.2020թ-ի որոշումը՝ որով հաստատվել է այն կազմակերպությունների ցանկը, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման պայմանագիր, սակայն չեն ներկայացվել Կարգի 13-րդ կետի հիման վրա հաստատված նիստերի արձանագրությունները:

Կարգի 29-րդ կետի համաձայն պետք է կայանա հայտերի բացման նիստ, որի վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից չի ներկայացվել նիստի արձանագրություն և որոշում:

Առկա է անհամապատասխանություն 1091 Հանրային իրազեկում ծրագրի 11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ միջոցառման շրջանակում ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ 2020 թվականի հունվարի 8-ին կնքված դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական

աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 01 պայմանագրի 3.2 կետի պահանջի հետ:

Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ ՊՈԱԿԸ-ը յուրաքանչյուր ամսվա համար, մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսի 15-ը դուրս է գրում հարկային հաշիվ, սակայն հարկային հաշիվները փաստացի դուրս են գրվել համապատասխանաբար 2 և 4 օր ուշացումներով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ վարչապետի աշխատակազմի 2020 թվականի բյուջեով առաջին եռամսյակում պլանավորվել է իրականացնել 44 միջոցառում, սակայն 820,699.3 հազ. դրամ ընդհանուր գումարով 13 միջոցառում ընդհանրապես չի իրականացվել:

Հաշվեքննությամբ ընդգրկված թվով ութ միջոցառումների իրականացման շրջանակում բյուջետային ծախսերի կատարման ցածր ցուցանիշ է արձանագրվել 1018 «Պետական հատվածի արդիականացում» ծրագրի 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռք բերում» միջոցառման 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով: Առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսվել է 938,853.8 հազ. դրամի ծախս, մինչդեռ փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է 361,296.8 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 38.5%:

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն, առարկություններ չեն ներկայացվել (կցվում է):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի հաշվեքննության արդյունքում հայտնաբերվել է թվով երկու անհամապատասխանություն՝ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի և կնքված պայմանագրի կետի պահանջի հետ կապված:

2. 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեն թերակատարվել է, կամ կատարվել է 49 . 4%-ով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետևել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով և կնքված պայմանագրով սահմանված պահանջների և պարտավորությունների կատարմանը՝ կապված փաստաթղթավորման և ժամկետների պահպանման հետ:
2. Հետևել նախատեսված ծրագրերի և իրականացվող միջոցառումների կատարման ընթացքին՝ հնարավորինս բացառել թերակատարումները: